բնակվող՝ որևէ անասնատեսակ չտնօրինող ընտանիքը այդ մասին հայտնում է (հայտարարություն է տալիս)՝ նշում կատարելով տեղեկանք-հայտարարագրի համապատասխան բաժնում:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» N 110-Ն որոշման հավելվածի.

1) 6.1 կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանում գործակալության ներկայացրած հարցման օրը համարվում է ընտանիքի (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) հողամասի հողատեսքի, դրա կադաստրային զուտ եկամուտի և հողատարածքի մակերեսի մասին տեղեկանքի ներկայացման օր:».

2) 9-րդ կետը «տեղեկատվությունը» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ տեղեկանք-հայտարարագրում լրացված տվյալների հիման վրա հաշվարկված՝ ընտանիքի հողօգտագործումից ստացվող եկամուտը)» բառերով.

3) 9.1-րդ կետը «տվյալները» բառից հետո լրացնել «համեմատում է տեղեկատվական բազայում առկա տվյալների հետ, և անհամապատասխանության դեպքում դրանք» բառերով.

4) 9.1-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Գործակալության տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկանք-հայտարարագրում լրացված և սույն կարգի 6.1-րդ կետով սահմանված կարգով ստացված տեղեկանքում առկա տվյալների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում գրավոր տեղեկացնում է գործակալության պետին: Գործակալության պետը եռօրյա ժամկետում տվյալ ընտանիքի ընտանեկան նպաստի իրավունքը դիտարկում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ և 25-րդ հոդվածների համաձայն:»:

3. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված այն ընտանիքների համար, որոնց՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստագրման ժամկետը լրանում է 2011 թվականի հունվար կամ փետրվար ամիսների ընթացքում՝ փաստագրման ժամկետ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ընտանիքների անապահովության գնահատման և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ամրագրված անհատական տվյալների պաշտպանության, փոփոխությունների կատարման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջև անհատական տվյալների փոխանակման կարգերը հաստատելու մասին» N 2317-Ն որոշման N

2 հավելվածի 24-րդ կետով նախատեսված ժամկետ սահմանել համապատասխանաբար 2011 թվականի փետրվարի 11-ը և մարտի 11-ը:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության միջոցով 2011 թվականի փետրվար ամսվա ընտանեկան նպաստի և հրատապ օգնության վճարման ցուցակները կազմելիս ընտանեկան նպաստի և հրատապ օգնության իրավունքը դիտարկել 2011 թվականի փետրվարի 11-ի դրությամբ, իսկ 2011 թվականի մարտ ամսվա ընտանեկան նպաստի և հրատապ օգնության վճարման ցուցակները կազմելիս ընտանեկան նպաստի և հրատապ օգնության իրավունքը դիտարկել 2011 թվականի մարտի 11-ի դրությամբ:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին տրամադրել երկրաշարժի հետևանքով քանդված շինությունների հասցեների ցանկը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ կառավարության 23.12.2010թ. N 1763-Ն որոշման դրույթներով սահմանվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման (փաստագրման) ժամանակ փաստաթղթերի ներկայացման նոր կարգ, որի համաձայն՝ համակարգում հաշվառման (փաստագրման) համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվելու է ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային մարմնի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքի անասնաբույժերի կողմից:

Նախարարությունում բնակչության (նաև ՍԾՏՄ-ների) կողմից ստացվել են ահազանգեր ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման (փաստագրման) աշխատանքների՝ մասնավորապես անհրաժեշտ տեղեկանքների տրամադրման գործընթացում առաջացած խնդիրների կապակցությամբ:

2010 թվականի հունվար ամսվա ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվել էր շուրջ **11500** ընտանիք, որոնք՝ համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի պետք է կրկին փաստագրվեին (պարտադիր պայման է՝ դիմելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկին հաշվառվելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելը) 2011 թվականի հունվար ամսվա ընթացքում: 2011 թվականի հունվարի 31-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը կազմում է շուրջ **1600** ընտանիք, ինչը նշանակում է, որ 2011 թվականի փետրվար ամսվա համար նպաստառու ընտանիքների թիվը կնվազի ավելի քան **8000** ընտանիքով՝ հնարավոր բացասական հետևանքներով:

Վերոհիշյալը ՀՀ փոխվարչապետի մոտ քննարկվել է 26.01.2011թ. և 31.01.2011թ. կայացած խորհրդակցությունների ընթացքում՝ շահագրիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, և հանձնարարվել է առավել սեղմ ժամկետներում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի ընդունմամբ հնարավորինս կլուծվեն առաջացած խնդիրները:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես նաև սոցիալական հնարավոր լարվածությունը մեղմելու նպատակով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով հնարավորինս հստակեցվում են տեղեկանքների տրման գործընթացները կամ սահմանում խնդրի լուծման այլընտրանքային մեխանիզմներ:

Միաժամանակ 2011 թվականի հունվար և փետրվար ամիսների փաստագրվող ընտանիքների համար փաստագրման ժամկետները հետաձգվում են մինչև՝ համապատասխանաբար 2011 թվականի փետրվարի 11-ը և մարտի 11-ը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի (այսուհետ՝ որոշման նախագիծ) ընդունմամբ ՀՀ պետական բյուջեում ծասերի կամ եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխությունների կատարման անհրաժեշտություն չկա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյան